ՀՏԴ 37.061(100)(479.25)

Ջ.Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆՈՐՈՎԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Աղքատությունը նոր երևույթ չէ: Այն ավելի խորացավ համավարակի ազդեցությամբ և դրսևորվեց նոր պատճառաբանությամբ: Համաշխարհային տնտեսության մեջ առաջացավ «նոր աղքատներ» եզրույթը: Աղքատության նվազեցման հիմնական ուղին երկրի ներառական զարգացումն է:

Առանցքային բառեր. աղքատության հիմնախնդիր, նոր աղքատներ, ներառական զարգացում:

Ներածություն. Մարդկային քաղաքակրթության զարգացմանը մշտապես ուղեկցել է աղքատությունը: Նույնիսկ 21-րդ դարում աղքատության մակարդակը ո՛չ միայն չնվազեց, այլև ընդհակառակը, COVID-19 համավարակն է՛լ ավելի ընդլայնեց «աղքատություն» կոչվող եզրույթի շրջանակները: Համաշխարհային բանկի «Աղքատության և համընդհանուր բարգավաճման 2020թ.» զեկույցում [1], ինչպես նաև նույն կազմակերպության բազմաթիվ փորձագետների հետազոտություններում, մասնավորապես՝ հետազոտություններից մեկում, (Ք.Լակներ և ուրիշներ) նշվում է [1], որ եթե 2017 թ.-ին աշխարհի բնակչության 9.2% -ը կամ 689 միլիոն մարդ աղքատության մեջ էր ապրում, ապա համավարակի ազդեցությամբ 2020թ.-ին 71-ից մինչև 100 մլն մարդ ևս կհայտնվեն ծայրահեղ աղքատության մեջ (կսպառեն օրական 1,90 դոլար միջազգային շեմից ցածր եկամուտ): Հետազոտողներն այս եզրահանգմանն էին եկել դեռևս իրենց նախորդ հետազոտության [1] շրջանակներում: Կնշանակի, աղքատության հիմնախնդիրն աշխարհում խորանում է, առավել ևս, երբ բախվում ենք նոր զարգացումներով դրսևորվող համաշխարհային տնտեսության հետ: Փորձագետները շարունակում են աղքատության վրա համավարակի ազդեցության կանխատեսումները և ներկայացնում են նոր գնահատումներ: Նրանք նշում են, որ համավարակի ազդեցությամբ աշխարհում 88-115 մլն մարդ ևս կհայտնվի աղքատության տիրույթում [1]: Ավելին, 2021թ.-ին «նոր աղքատներ»-ի շրջանակը կընդլայնվի՝ կազմելով՝ 150 մլն մարդ [2] կամ աշխարհի բնակչության գրեթե 9,4%-ը [1]: Աշխարհում «նոր աղքատներ»-ի թվի աճը տարածվում է նաև օրական 3.20դոլար սահմանված աղքատության միջազգային շեմի տիրույթում ևս:Ըստ գնահատումների՝ այն աճել է 175-ից մինչև 228 մլն մարդ (Համաշխարհային բանկի համապատասպանաբար 2020թ. հունիսի և 2021թ. հունվարի հրատարակություններ) [2]: Գնահատումների

բոլոր սցենարների դեպքում «նոր աղքատներ»-ի աճը հիմնականում գրանցվում է Հարավային Ասիայում [2], ընդ որում, ըստ հոռետեսական սցենարի, այն կկազմի աշխարհի բնակչության 56,5%-ը, իսկ տեղեկատվական-բազային սցենարի դեպքում՝ 49,3%: Երկրորդ հորիզոնականում Աֆրիկան է՝ համապատասխանաբար 40,0% և 26,2%:

Այսպիսով, մասնագիտական շրջանակներում շրջանառության մեջ է դրվում մի նոր եզրույթ՝ «նոր աղքատներ [3]»: Ովքե՞ր են նրանք: Ըստ Դ.Մահլերի և ուրիշների [3], ***«նոր աղքատներ»-ն այն մարդիկ են, ովքեր աղքատության փիրույթում հայտնվեցին համավարակի ազդեցությամբ, մինչդեռ մինչհամավարակային զարգացումների տրամաբանությամբ նրանք գտնվելու էին աղքատության շրջանակներից դուրս:***

Թեմայի արդիականությունը և հետազոտության նպատակը: Աղքատության հիմնախնդրի հետազոտության արդիականությունը այն է, որ աշխարհում դեռ մոլեգնում է համավարակը, շարունակվում է ռուս-ուկրաինական պատերազմը, կանխատեսվում են վերջիններիս ազդեցության ամենատարբեր սցենարներ, դեռևս իշխում է անորոշությունը, և նման պայմաններում առավել ցցուն ու մտահոգիչ են հասարակության մեջ խորացող անհավասարության, աղքատության տարբեր և նորովի դրսևորումները: Ուստի, խիստ հրատապ ու այժմեական է հիշյալ հիմնախնդրի ուսումնասիրությունը:

Հայաստանը չի կարող անմասն մնալ նման զարգացումներից:

Հետազոտության հիմնական նպատակը, խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը:

Հետազոտության նպատակը ՀՀ մակրոտնտեսական միջավայրի ներկա ցուցանիշների վիճակագրական վերլուծության միջոցով բազմաբնույթ գործոնների ազդեցությամբ պայմանավորված առկա հիմնախնդիրների բացահայտումն է՝ աղքատության խորապատկերին, այդ տիրույթում նաև աղքատության նորովի դրսևորումների մեկնաբանումը համաշխարհային տնտեսության մեջ, մասնավորապես՝ զարգացած երկրներում (այսուհետ՝ ԶԵ) և ձևավորվող շուկաներով զարգացող երկրներում (այսուհետ՝ ՁՇ և ԶԵ), Հայաստանի Հանրապետությունում:

Հետազոտության արդյունքում կատարվում է ոլորտին առնչվող առկա տեղեկատվության ուսումնասիրություն, ինչը կարող է օգտակար լինել կառավարությանը, քաղաքացիական հասարակությանը՝ COVID-19 համավարակի ազդեցությունների հետագա չեզոքացման և հետհամավարակային ժամանակա-հատվածում աղքատության նվազման, տնտեսական և սոցիալական արդարության փոխառնչություններում ներդաշնակ զարգացումներ ապահովելուն միտված միջոցառումներ մշակելիս:

Այդ նպատակով ներկայացվում են.

✓ Աղքատության հիմնախնդրի նորովի դրսևորումները համաշխարհային տնտեսության մեջ՝ պայմանավորված COVID-19 համավարակի ազդեցություններով, և դրանց լուծման հեռանկարները:

✓ Աղքատության ներկա իրավիճակը ՀՀ-ում և դրա նվազեցման հնարավորությունները:

✓ Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել հետազոտվող թեմային նվիրված Միջազգային տնտեսական կազմակերպությունների զեկույցները, հայրենական և արտասահմանյան տնտեսագետների գիտական հրապարակումներն ու աշխատությունները, ինչպես նաև փորձագիտական հանրույթի կարծիքները: ՀՀ-ում աղքատության վերաբերյալ որոշակի տվյալներ հրապարակվում են ՀՀ Վիճակագրական կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ՎԿ) «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», ինչպես նաև «Պարենային ապահովությունը և աղքատությունը» զեկույցներում [4]:

✓ ***Խնդրի լուծման նորույթը*** պայմանավորված է աղքատության ոլորտում առկա իրավիճակի նորագույն դրսևորումների, աղքատության երևույթի գնահատման տարբեր ցուցանիշների համադրման և հետագա զարգացումների ճանապարհային քարտեզի ներկայացմամբ:

Հետազոտության արդյունքները. Անդրադառնանք Համաշխարհային բանկի վերջին՝ «Համաշխարհային տնտեսության հեռանկարները» 2022թ. հունվարյան զեկույցին [5], որտեղ արձանագրվեց այն իրողությունը, որ համաշխարհային տնտեսության կանխատեսումները դրսևորվեցին է՛լ ավելի վատատեսական սցենարով: Այսպես, համաշխարհային տնտեսության մեջ 2021թ. արձանագրվեց 5,5% տնտեսական աճ, (կանխատեսումը 5,6%), իսկ ԶԵ-ում և ԶՇ և ԶԵ-ում համապատասխանաբար՝ 5,0% և 6,3% տնտեսական աճ (կանխատեսումը համապատասխանաբար՝ 5,4% և 6,0%): Նշյալ զեկույցում մասնավորապես ընդգծվում է այն փաստը, որ համաշխարհային տնտեսության վերականգնումն անչափ դանդաղում է՝ պայմանավորված COVID-19 համավարակի նոր դրսևորումներով, բազմաբնույթ նոր ռիսկերով, անկանխատեսելի ֆինանսական սթրեսներով ու գնաճային սպասումներով: Ավելին, շրջակա միջավայրի հիմնախնդիրները կարող են ազդել հումքային ապրանքների գների տատանումների վրա: Է՛լ ավելի կարող է սրվել արտաքին պարտքի հիմնախնդիրը՝ կապված վերածևակերպումների հետ: Ավելին, նշյալ զեկույցում, համաշխարհային տնտեսության մեջ տարբեր երկրներում տնտեսական աճի կանխատեսումների առնչությամբ ընդգծվում է, որ 2022թ. համաշխարհային տնտեսության մեջ կգրանցվի հետընթաց՝ 4,1% տնտեսական աճ՝ 2021թ. 5,5% տնտեսական աճի դիմաց, ընդ որում՝ ԶԵ-ում նույն ժամանակահատվածում արձանագրվում են համապատասխանաբար 3,8%՝ նախորդ

տարվա 5,0% տնտեսական աճի դիմաց, իսկ ՁԾ և ՁԵ-ում՝ 4,6%՝ 2021թ. 6,3% [5] տնտեսական աճի համեմատությամբ: Այս համատեքստում կարևորում ենք ԱՄՆ և Չինաստան փոխհարաբերությունների հեռանկարները, որոնց վերաբերող վերը հիշատակված զեկույցում տնտեսական աճի համապատասխան կանխատեսումներն են՝ համապատասխանաբար 2022թ. և 2021թ.-ին՝ ԱՄՆ՝ 3,7% և 5,6% [6], և Չինաստան՝ 5,1% և 8% [6]: Իրականում, ԱՄՆ-Չինաստան մրցապայքարը «թեժանում է», որով և պայմանավորված են աշխարհատնտեսական զարգացումները բոլոր տարածաշրջաններում և բոլոր ոլորտներում: Համաշխարհային բանկի հունվարյան զեկույցում ևս մեկ անգամ կարևորվում է համավարակի ազդեցությամբ սոցիալական լարվածությունների ուժգնացումը, մասնավորապես՝ անհավասարության խորացումը բնակչության տարբեր շերտերի միջև: Վերջինս աներկբայորեն դրսևորվում է հատկապես աղքատության մակարդակի խորացման մեջ: Բավական է արձանագրել այն փաստը, որ դեռևս Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից ներկայացված Ներառական զարգացման համաթվի հաշվարկման շրջանակներում արդեն իսկ 23-րդ հորիզոնականն զբաղեցրած ԱՄՆ-ը [7] խնդիր ուներ երկրում աղքատության գնահատման հետ կապված: Եթե 1974թ.-ին ԱՄՆ-ում աղքատները կազմել են երկրի բնակչության 0,5 %-ը, ապա 2018թ.-ին այդ թիվը կազմել է 1% [8]: Չինաստանում, 1990թ. աղքատության մակարդակը կազմել է 66,3 %, իսկ 2016թ.ին նվազել է և կազմել բնակչության 0,5 %-ը: Այս վիճակագրությունը վերաբերում է օրական 1,90 դոլար միջազգայնորեն սահմանված աղքատության գծին: Ցուցանիշների դինամիկայի միտումները նույնն են նաև օրական 3,20 դոլար միջազգայնորեն սահմանված աղքատության գծի դեպքում ևս: Կնշանակի, աղքատության հիմնախնդիրն այսօր անհանգստացնում է ո՛չ միայն ցածր, միջին և բարձր եկամուտով երկրներին, այլ նաև նույնիսկ գերհզոր երկրներին:

Փաստորեն, «սև կարապն» իր գործն արեց [9], և ասպարեզ եկան «նոր աղքատները»:

Համավարակի շարունակականության և, բնականաբար, աղքատության վրա նրա ազդեցության գնահատման նորովի դրսևորումներից առավել անհանգստացնողն ու խորքային ռիսկեր պարունակողն այն հանգամանքն է, որ մարդն աշխատում է, զբաղված է, սակայն աղքատության տիրույթում է, նա ի զորու չէ բավարարել իր և իր ընտանիքի նվազագույն պահանջմունքները: Ավելին, «նոր աղքատները» հատկապես գյուղական վայրերում են, երիտասարդների (15-24 տարեկան) և կանանց շրջանում [10]: Ավելին, անհանգստացնող է մանկական աղքատության տարածումը: Աշխարհում, 6 երեխաներից մեկը, կամ որ նույնն է, 356 մլն երեխաներ [11] ապրում են ծայրահեղ աղքատության մեջ: Ընդ որում, այս երեխաներն ապրում են օրական 1,90 դոլար միջազգայնորեն սահ-

մանված աղքատության գծում գտնվող ընտանիքներում: Հպանցիկ անգամ կարելի է պատկերացնել, թե համավարակը որքան կվատթարացնի իրավիճակն այս ընտանիքներում: Աղքատությունն ակտիվանում է նաև քաղաքական հակասություններով լեցուն տարածաշրջաններում և կլիմայական փոփոխություններին գրեթե չդիմակայող ՁՇ և ԶԵ երկրներում:

Այսպիսով, աղքատության կրճատման հենասյունը համաշխարհային տնտեսության մեջ «Արդյունաբերություն-4-ի» [12] ներդրումն է՝ աշխատանքի արտադրողականության բարձրացմանը միտված գործողությունները, որոնք աներկբայորեն ապահովում են անհամեմատ կայուն և երկարաժամկետ դիմադրողականություն՝ անկախ «սև կարապներից»:

Ցանկացած երկրի մակրոտնտեսական իրավիճակն արտացոլում և պայմանավորում է տվյալ երկրում զարգացման առկա իրավիճակը, հնարավոր դրսևորումներն ու սպասումները: Դա տնտեսության զարգացման հայելին է, որի արտացոլանքը թույլ է տալիս գոտեպնդվել կամ ընդհակառակը՝ ցուցաբերել զգոնություն և ընդունել իրատեսական ու առաջընթաց պայմանավորող որոշումներ:

Այս հարթության մեջ փորձենք ուսումնասիրել ու կատարել որոշ եզրահանգումներ՝ վերջին տարիների ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը բնութագրող ցուցանիշների համադրման միջոցով (նկ.1):



Նկ. 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2020-2022թթ.,% [13,14]

ՀՀ մակրոտնտեսական միջավայրի 2022թ.ցուցանիշներից ՏԱՑ-ի համադրումը նախորդ տարիների նույն ժամանակահատվածի ցուցանիշի հետ փաստում է, որ 2022թ. հունվար –սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրանցվել է 9,7% աճ, որի հիմնվորումը ոչ թե տնտեսության աննախադեպ ակտիվացումն է, այլ ռելոկանտների մուտքը Հայաստան, դրամական զգալի փոխանցումները, վերաարտահանման ծավալների աճը: Պարզ է, որ արձանագրված դինամիկան դեռևս խոստումնալից չէ, ուստի և վաղ էր խոսել տնտեսության ակտիվ վերականգնման և հնարավոր վերընթաց զարգաց-

ումների մասին:Սակայն, հուսադրող են ՀՀ-ում զբաղվածության և գործազրկության մակարդակներն ըստ եռամսյակների 2020-2022թթ. ՀՀ ՎԿ ներկայացված համապատասխան ցուցանիշները [13,14,15]: Դարձյալ նպատակ չհետապնդելով առավել խորությամբ ուսումնասիրելու նշյալ ցուցանիշները, արձանագրենք, որ նշված տարիներին ուսումնասիրվող ցուցանիշների գծով նկատվել է դրական դինամիկա (նկ.2):



Նկ. 2. ՀՀ-ում զբաղբածության և գործազրկության մակարդակները 2020-2022թթ. ըստ եռամսյակների, %,[13,14,15]

Սակայն, նույնն չենք կարող ասել սպառողական գների ինդեքսի վերաբերյալ [16]: 2020-2022թթ. ընթացքում ՀՀ տնտեսության մեջ նկատվել է սպառողական գների էական բարձրացում, 2022թ. հունվար-սեպտեմբերին այն կազմել է 9,5%, գրեթե կրկնակի անգամ գերազանցելով սահմանված ցուցանիշը (նկ.3):



Նկ. 3. ՀՀ-ում սպառողական գների ինդեքսների փոփոխությունը 2020-2022թթ. ըստ եռամսյակների, տոկոսային կետ [13,14,16]

Հաջորդիվ տեսնենք, թե նման մակրոտնտեսական իրավիճակում աղքատությունն ինչպե՞ս է դրսևորվում ՀՀ-ում, և որո՞նք են դրա հաղթահարման հնարավորությունները:

Աղքատության դրսևորումը ՀՀ-ում և դրա հետագա հաղթահարման հնարավորությունները. Սույն հետազոտության շրջանակներում աղքատության ցուցանիշների համադրումը հնարավոր է բացառապես 2019-2020թթ.-երին: Պատճառն այն է, որ 2019թ. սկսած աղքատության մակարդակը ՀՀ-ում գնահատվում է նոր և ճշգրտված մեթոդաբանությամբ, որն իրականացվել է Համաշխարհային բանկի փորձագետների միջնորդությամբ: Նոր ցուցանիշները համադրելի չեն նախորդ տարիների ցուցանիշների հետ, ուստի և հետազոտության շրջանակները կսահմանափակվեն նշյալ ժամանակահատվածում աղքատությունը բնութագրող ցուցանիշների ուսումնասիրությամբ և այդ տիրույթում համավարակով պայմանավորված որոշակի դրսևորումների բացահայտմամբ: Համաձայն նոր մեթոդաբանության՝ Հայաստանում աղքատության մակարդակը բնութագրող ցուցանիշները, այն է՝ աղքատության վերին, ստորին և ծայրահեղ աղքատության գծերը, ինչպես նաև աղքատության միջին գիծը, արտահայտված մեկ չափահաս անձի հաշվով, 2019թ. մեթոդաբանությամբ մեկ ամսվա համար գնահատվել են՝ համապատասխանաբար, 53 043 դրամ (կամ 110.3 ԱՄՆ դոլար), 35 054 դրամ (կամ 72.9 ԱՄՆ դոլար), 23 763 դրամ (կամ 49.4 ԱՄՆ դոլար) և 44 048 դրամ (կամ 91.7 ԱՄՆ դոլար): 2020թ. նշյալ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝53 641 դրամ (կամ 109,7 ԱՄՆ դոլար), 35 324 դրամ (կամ 72,2 ԱՄՆ դոլար), 23 828 դրամ (կամ 48,7 ԱՄՆ դոլար) [17]:

Եվ այսպես, 2019թ. Հայաստանում աղքատության մակարդակը կազմել է 26,4%, այսինքն ՀՀ յուրաքանչյուր չորրորդ բնակիչն աղքատ է [18] եղել: Ընդ որում նշենք, որ 2019թ. Հայաստանում գրանցվել է համեմատաբար բարձր տնտեսական աճ, այն է՝ 7,6%, որը 2018թ.համապատասխան ցուցանիշը գերազանցել է 2,4 տոկոսային կետով [19]: Սպառողական գների ինդեքսը գտնվել է թույլատրելիության սահմաններում, այն 2018թ. համեմատ աճել է 1,4%-ով: 2019թ. մակրոտնտեսական ցուցանիշների հպանցիկ դիտարկումն արդեն իսկ թույլ է տալիս եզրահանգել, որ ոչ ներառական տնտեսական աճը և հատկապես մակրոտնտեսական միջավայրի բացասական դրսևորումներն արդեն իսկ 2019թ. համար կանխորոշեցին աղքատության մակարդակի բացասական միտումները: Ու թերևս, միանգամայն օրինաչափորեն, նախորդ տարվա համեմատությամբ գրանցվեց աղքատության մակարդակի ավելի բարձր ցուցանիշ, չնայած այն փաստին, որ ինչպես նշեցինք վերևում, 2019թ. ՀՀ ՎԿ փոխեց աղքատության մակարդակի գնահատման ցուցանիշների մեթոդաբանությունը: Ըստ աղքատության միջին գծի՝ 2020թ.

աղքատության մակարդակը գնահատվել է 27%, որը 0,6տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա 26,4%-ից: Ընդ որում, 2020թ. պարենային /ծայրահեղ աղքատությունը կազմել է 0,7%, աղքատությունն ըստ ստորին գծի՝ 9,7%, աղքատությունն ըստ վերին գծի՝ 47,6% [17]: 2019թ. համեմատ վերջին 3 ցուցանիշները գրանցել են և՛ բացասական և՛ դրական դինամիկա [17]: Այսպես, նախորդ տարվա համեմատ նվազել է ծայրահեղ աղքատությունը՝ 0,7%-ով, նվազել է նաև աղքատությունն ըստ ստորին գծի՝ 0,5%-ով և ավելացել է աղքատությունն ըստ վերին գծի՝ 3,8%-ով: Վերջինս վկայում է այն մասին, որ Հայաստանի բնակչության 47,6%-ի սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել ամսական 53641 դրամից: Եթե իրատեսորեն արձանագրենք այն իրողությունը, որ ո՛չ միայն նշյալ ժամանակահատվածում, այլ նաև 2022թ. հունվար-սեպտեմբերին էապես աճել են գները (տե՛ս նկ.3), ապա, կարծում ենք՝ ակնհայտ է այն անմխիթար վիճակը, որում հայտնվել է Հայաստանի յուրաքանչյուր երկրորդ բնակիչը:

Այսպիսով, վերջին 4 տարիներին աղքատության մակարդակը բնութագրող ցուցանիշների դինամիկան ևս վկայում է COVID-19 համավարակով պայմանավորված աղքատության մակարդակի խորացման և Հայաստանում ևս «նոր աղքատներ» հասկացության գոյության մասին:

Աղքատության հիմնախնդիրն իր իրարամերժ դրսևորումն է գտել նաև այն շրջանակներում, երբ ուսումնասիրում ենք աղքատության հիմնական ցուցանիշները ըստ մարզերի և ք. Երևանի: Այսպես, ք.Երևանում 2019թ.ծայրահեղ աղքատները կազմել են քաղաքի բնակչության 1,1%-ը, 2020թ. նրանց թիվը կրճատվել է և կազմել է 0,2%: Ծայրահեղ աղքատների ամենամեծ մասնաբաժինը գրանցվել է Գեղարքունիքի մարզում՝ 2019թ.՝ 3,4%, որը կրճատվել է 2020թ. և կազմել է 1,9%: Ծայրահեղ աղքատներ չկան Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում: 2020թ. աղքատների ընդհանուր թվաքանակի գերակշիռ մասը՝ 21,0%-ն ապրում է ք. Երևանում: Երկրորդ հորիզոնականում Շիրակի մարզն է՝ 13,8%, հաջորդը՝ Գեղարքունիքի մարզը՝ 13,7%: Աղքատների ամենափոքր մասն ապրում է Սյունիքի մարզում: Իսկ մեծ հաշվով՝ աղքատների մեծ մասն ապրում է մարզերում՝ գյուղական վայրերում: 2020թ. գյուղական բնակավայրերում աղքատության մակարդակը կազմել է 33,6%, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 22,5%: Աղքատության մակարդակը բնութագրող ցուցանիշների այս շրջանակում փաստենք մեկ հետաքրքիր իրողություն [17]:

Աղքատության հիմնախնդրի խորացման անչափ կարևոր գործոն է երկրի ժողովրդագրական պատկերը: Այս հարթության տիրույթում բավական է բարձրաձայնել մեկ հիմնարար հիմնախնդիր, այն է՝ Հայաստանում բնակչության ժողովրդագրական ծերացման փաստը: Այսպես, 2000-2021թթ. տարեսկզբի դրությամբ Հայաստանի բնակչության տարիքային կառուցվածքում, ըստ հիմնական

տարիքային խմբերի [17], ավելացել է աշխատունակ տարիքից բարձր (63 և ավելի տարեկան) բնակչության թվաքանակը՝ 4,4%-ով, աշխատունակ բնակչության թվաքանակը (16-62 տարեկան) նույն ժամանակահատվածում աճել է ընդամենը 1%-ով, և ավելորդ չենք համարում նշել, որ այդ տարիներին առավել անհանգստացնողը աշխատունակ տարիքից ցածր բնակչության (0-15 տարեկան) թվաքանակը կրճատվել է 5,4%-ով: Ժողովրդագրական ծերացման նման արագընթաց իրավիճակն իրոք ազգային անվտանգության ապահովման լրջագույն մարտահրավերներից մեկն է: Եվ այն վիճակագրությունը, որի համաձայն 2021թ. ՀՀ 1000 բնակչի հաշվով 1 աշխատունակ տարիքի բնակչությանը բաժին է ընկել անաշխատունակ տարիքի 575 մարդ (237 տարեց և 338՝ 0-15տարեկան երեխա) ո՛չ միայն անհանգստացնող է, այլև պահանջում է հրատապ և համակարգային լուծում:

Առանձնակի հետաքրքրություն և միաժամանակ մարտահրավերներ են պարունակում Հայաստանում աղքատության հիմնախնդրին վերաբերող այն ցուցանիշները, որոնք կապված են ըստ տարիքային խմբերի նշյալ ցուցանիշների վերլուծության հետ: Այս տիրույթում արձանագրենք, որ աղքատության ամենաբարձր ցուցանիշը 2020թ. գրանցվել է 6-9 տարեկան երեխաների խմբում, ամենացածրը՝ 45-49 տարեկանների խմբում: ԸՆդ որում, նշենք որ 6-9 տարիքային խմբում 2020թ. նախորդ տարվա համեմատությամբ աղքատության ցուցանիշն ավելացել է 2,3%-ով, ինչը ամենաբարձր ցուցանիշն է բոլոր տարիքային խմբերի համապատասխան փոփոխությունների հետ համեմատած: Ընդհանուր առմամբ նշենք, որ աղքատության մակարդակն անհանգստացնող է հատկապես երեխաների շրջանում: Թե՛ 2019թ. և թե՛ 2020թ.՝ 30% և ավելի աղքատության մակարդակ է գրանցվել 0-17 տարեկան երեխաներից յուրաքանչյուրի տարիքային խմբում: Ավելորդ չենք համարում նշել, որ այս երևույթն իր մեջ երկարաժամկետում ազգային անվտանգության ապահովման լուրջ ռիսկեր է պարունակում, քանի որ մանկական աղքատությունն իր հետ բերում է սոցիալ-տնտեսական բազում հիմնախնդիրներ՝ կապված երեխաների թերսնման, ոչ պատշաճ մակարդակով առողջապահական, կրթական, մշակութային ծառայություններից օգտվելու հետ:

Թերևս ՀՀ-ում աղքատության մակարդակի վրա ազդեցության տիրույթում էական դերակատարում ունեն սոցիալական տրանսֆերտները:

Ինչպես նկատում ենք նկ.4-ում զետեղված տեղեկատվությունից, վերջին 10 տարիների ընթացքում ՀՀ-ում աղքատության մակարդակը պահպանում է իր զգալի կախվածությունը սոցիալական տրանսֆերտներից, այն է՝ կենսաթոշակներից, ընտանեկան նպաստից և սոցիալական այլ աջակցություններից: Միանգամայն տրամաբանական է, որ սոցիալական տրանսֆերտները բավականաչափ նվազեցնում են աղքատության միջավայրի ռիսկերը և ապահովում աղքատության

ավելի ցածր մակարդակ:Եթե 2011թ. սոցիալական տրանսֆերտները աղքատության մակարդակը նվազեցնում էին 18,2%-ով, ապա 2020թ. այդ ցուցանիշը կազմում է 24,3%: Որքան էլ որ աղքատության մակարդակի գնահատման մեթոդաբանությունը փոխվել է, այդուհանդերձ, սոցիալ-տնտեսական իրավիճակի նույնիսկ հպանցիկ դիտարկումը թույլ է տալիս եզրահանգել, որ աղքատ բնակչության կենսամակարդակի որոշակի բարելավումը դեռևս պայմանավորված է սոցիալական տրանսֆերտներով: Ավելին, վերջինս էապես ազդում է նաև աղքատության մակարդակը բնորոշող այնպիսի ցուցանիշների վրա, ինչպիսիք են աղքատության խորությունն ու աղքատության սրությունը: Բավական է միայն նշել, որ 2020թ. աղքատության խորությունը սոցիալական տրանսֆերտների հաշվին կրճատվել է 17,1%-ով, իսկ 2019թ.՝ 14,3%-ով: Նույն ներգործությունն է նկատվում նաև աղքատության սրության ցուցանիշի պարագայում:



Նկ. 4. ՀՀ-ում աղքատության մակարդակը նախատրանսֆերտային, հետտրանսֆերտային պայմաններում 2011-2020թթ., % [20]

Նշյալ տարիներին այն համապատասխանաբար նվազել է 12,9 %-ով և 10,8%-ով: ՀՀ ՎԿ գնահատումների համաձայն, 2020 թվականի գնահատականները ցույց են տալիս, որ բոլոր տեսակի սոցիալական տրանսֆերտների (այդ

թվում՝ կենսաթոշակների և սոցիալական աջակցության) վճարումը եթե դադարեցվի, և տնային տնտեսությունները չկարողանան այլ աղբյուրների հաշվին փոխհատուցել այդ կորուստը, ապա աղքատության ընդհանուր մակարդակը գրեթե կկրկնապատկվի (ներկայի 27.0%-ից հասնելով 51.3%-ի[8]): Աղքատներն ավելի կաղքատանան, քանի որ աղքատության խորությունը՝ աղքատության գծի նկատմամբ նրանց միջին սպառման պակասուրդը 5%-ից կհասնի 22%-ի: Բացի այդ, աղքատությունն ավելի կսրվի. աղքատության սրության համաթիվը 1%-ից կհասնի 14%-ի [21]:

Այսպիսով, ցավալի է արձանագրել, սակայն նկատում ենք, որ համավարակն է՛լ ավելի է կարևորել սոցիալական տրանսֆերտների ներգործությունը Հայաստանի բնակչության աղքատության հաղթահարման գործընթացների վրա: Սոցիալական տրանսֆերտները, ՀՀ ՎԿ մեթոդաբանությանը համապատասխան, ներառված է «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» հրապարակման Մաս 3-ում՝ «Ոչ նյութական աղքատության» շրջանակներում: Այս տիրույթում կարող ենք առաջարկել կենսաթոշակային տարիքի երկարաձգում՝ մինչև 65 տարեկան, ընդունված 63 տարեկանի փոխարեն, ինչի արդյունքում մի կողմից՝ կարող է որոշակի չափով լուծվել ժողովրդագրական ծերացման հիմնախնդիրը, մյուս կողմից՝ աղքատության հիմնախնդիրը:

Մեր օրերում աղքատությունը դրսևորվում է տարբեր ձևերով և անմիջականորեն արտահայտվում է մարդկանց կենսագործունեության այնպիսի հատվածներում, ինչպիսին է ոչ միայն սպառումը, այլև կրթության մակարդակը, առողջապահության ծառայություններից օգտվելու հնարավորությունը, արժանապատիվ ապրելու հասանելիությունը: Արձանագրենք, որ այսօր, առավել քան երբևէ, կարևորվում է ոչ միայն նյութական աղքատությունը, այլ նաև ոչ նյութական աղքատությունը: Վերջինս բնորոշվում է կրթական ցածր մակարդակի, վատ առողջության, սոցիալական ծառայությունների անմատչելիության, մարդու իրավունքների և խոսքի ազատության տիրույթում սպառողների անկարողության և դրանց անհասանելիության վարքագծով:

Այսպիսով, աղքատությունը և՛երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արգասիքն է, և՛ մշակույթ է, և՛ վարքագիծ, և՛ ամենակարևորը՝ ապրելակերպ:

Աղքատության նվազեցման հնարավորությունները ՀՀ-ում. ՀՀ-ում աղքատության կրճատման հիմնական գործոնը կայուն և երկարաժամկետ, ինչպես նաև ներառական տնտեսական աճն է: Ո՛չ պակաս կարևոր գործոն է ***եկամուտների ավելացումը***, մասնավորապես՝ միջին ամսական անվանական աշխատավարձի բարձրացումը, դրա ***ինդեքսավորումը, հատկապես համավարակից հետո նկատելի գնաճի պայմաններում:*** Այս շրջանակներում, կարևորում ենք

նաև սոցիալական տրանսֆերտների ակտիվ դերակատարումը աղքատության մակարդակի կրճատման վրա: Հետհամավարակային համաշխարհային տնտեսության մեջ դրսևորվող ներկա մարտահրավերները պայմանավորում են ***գյուղատնտեսության ոլորտի զարգացումն առաջնահերթություն դիտարկելու փաստը:*** Եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ աղքատության մակարդակն անհամեմատ բարձր է գյուղական վայրերում, ապա, կարծում ենք, գյուղատնտեսության ոլորտում ներդրումներն ու պետության կողմից աջակցող միջոցառումների իրականացումը ժամանակի հրամայականն են ***(սուբսիդիաներ, զրոյական տոկոսադրույքով վարկեր, պարարտանյութերի, սերմացուի տրամադրում, լիզինգի հասանելիություն և այլն):*** Եվ վերջապես, 21-րդ դարում, չկարևորել ***կրթության դերակատարումը*** աղքատության մակարդակի նվազեցման գործում, կարծում ենք իրատեսական չէ: Համավարակն ամենանվազ ազդեցությունն ունեցավ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների ապրելակերպի վրա: Ուստի և օրվա հրամայականն է՝***աշխատաշուկայի պահանջներից ելնելով՝ նոր մասնագետների պատրաստումը, նոր կրթական ծրագրերի, փորձի և հմտությունների տարածումը՝ կրթության բոլոր մակարդակներում:***

Եվ ամենակարևորը, ՀՀ-ում աղքատության նվազեցման անհրաժեշտությունը և պահանջվող գործիքակազմը պետք է պայմանավորված լինեն և բխեն ազգային անվտանգության ապահովման բոլոր շահերից:

Եզրակացություն: Համաշխարհային բանկն աղքատության հիմնախնդրի լուծման տիրույթում դրել է երկու նպատակ՝ վերջ դնել աղքատությանը մեկ սերնդի կյանքի ընթացքում և նպաստել համընդհանուր բարեկեցության բարձրացմանը [22]: Իրականում համաշխարհային տնտեսության մեջ աղքատության մակարդակն իրոք նվազել է: Եթե 1990թ. 10 մարդուց 4-ն ապրում էին ծայրահեղ աղքատության մեջ, ապա արդեն 2013թ. ծայրահեղ աղքատության մեջ գտնվում էր 10-ից մեկ մարդ: Առավել ևս, ինչպես արդեն նշել ենք, համավարակին նախորդող կանխատեսումներում աղքատության մակարդակը բնութագրող ցուցանիշներն ունեին նվազման միտում:Սակայն, մոտակա տարում դեռևս 767 մլն մարդ [22] կապրեն ծայրահեղ աղքատության շրջանակներում:

21-րդ դարում, COVID-19 համավարակի ազդեցությամբ ի հայտ եկավ մարդկանց մի ստվար խումբ, որոնք անվանվեցին «նոր աղքատներ»: Այդ պայմաններում ՀՀ 2021 թվականի մակրոտնտեսական զարգացումները, ինչպես նաև Համաշխարհային բանկի 2022թ. տնտեսական աճի կանխատեսումներն ահազանգում են, որ աղքատության մակարդակը մոտակա տարիներին դրսևորելու է աճի միտումներ:

Այսպիսով, իրականում, աղքատության հիմնախնդիրը շարունակում է նոր երանգներ ու դրսևորումներ ձեռք բերել, այն դառնում է բազմաչափ և պայմանավորված է ո՛չ միայն նյութական, այլ նաև ոչ նյութական պահանջմունքների բավարարման ռիսկերով: Այս տիրույթում հիմնական բաղադրիչները առողջապահության և կրթության ոլորտում են, ինչն էապես նպաստում է աղքատության վերարտադրությանը: Աղքատության գնահատման և դրա նվազեցմանն ուղղված միջոցառումները պահանջում են հասկանալ աղքատությունը և բացահայտել դրա առաջացման աղբյուրները: 2019թ. տնտեսագիտության ոլորտում Նոբելյան մրցանակի արժանացած ամերիկացիներ Մայքլ Կրեմերը, Աբեջիդ Բաներջին և ֆրանսուհի Էսթեր Դուֆլոն [23] գլոբալ աղքատության դեմ փորձարարական մոտեցման՝ աղքատության դեմ պայքարի առավել արդյունավետ ճանապարհներից մեկը համարում են կրթական և առողջապահական համակարգերի կատարելագործումն ու նշյալ ճանապարհով աղքատության նվազեցմանը միտված գործընթացների սպասարկումը:

Հայաստանն այլ ընտրություն չունի, քան կրթական համակարգի կատարելագործումը, գիտելիքի հաղթարշավը՝ տնտեսության բոլոր ոլորտներում: Սա արժանապատիվ կյանքով ապրելու միակ ճանապարհն է…

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-սեպտեմբերին» վիճակագրական տեղեկատու, ՀՀ ՎԿ, Երևան, 2021թ., էջ 9, https://armstat.am/am/?nid=82&id=2429, Համաշխարհային բանկ. Տվյալների բլոգ «COVID-19 համավարակի ազդեցության գնահատման թարմացումը աղքատության վրա.Նոր տվյալների ազդեցությունը», https://blogs.worldbank.org/fr/opendata/estimations-impact-de-la-pandemie-de-covid-19-sur-la-pauvrete
2. Համաշխարհային բանկ. Վաշինգտոն, 7 հոկտեմբերի 2020թ.«Նոր աղքատներ»-ից 10-ից 8-ը կգտնվեն միջին եկամտով երկրներում: https://www.banquemondiale.org/fr/news/press-release/2020/10/07/covid-19-to-add-as-many-as-150-million-extreme-poor-by-2021
3. Համաշխարհային բանկ. COVID-19 համավարակի պատճառով նոր աղքատների պրոֆիլը, 6 օգոստոսի, 2020., https://www.worldbank.org/en/topic/poverty/brief/Profiles-of-the-new-poor-due-to-the-COVID-19-pandemic, https://blogs.worldbank.org/opendata/updated-estimates-impact-covid-19-global-poverty
4. ՀՀ ԱՎԿ, Հրապարակումներ, https://www.armstat.am/am/?nid=82, https://www.armstat.am/am/?nid=82&id=2438, https://www.armstat.am/am/?nid=82&id=2437

5. Համաշխարհային տնտեսության հեռանկարները. Համաշխարհային բանկ, 2022թ.,հունվար, https://www.banquemondiale.org/fr/publication/global-economic-prospects
6. Համաշխարհային տնտեսության հեռանկարները. Համաշխարհային բանկ, 2022թ.,հունվար, https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/36519/9781464817601.pdf
7. **Թադևոսյան Ջ.** Հայաստանի տնտեսական զարգացման ուրվագիծը՝ ներառական զարգացման համաթվի տիրույթում, https://www.lragir.am/2019/01/17/410400/
8. Համաշխարհային բանկ,. https://data.worldbank.org/indicator/SI.POV.DDAY?view=chart&locations=US
9. ՀՀ ԱՎԿ, 1996-2019թթ. ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից աղքատության մակարդակի գնահատման համար կիրառվող մեթոդաբանությունները, https://armstat.am/file/article/poverty_2020_a_1_.pdf, Երեք հատված Նասիմ Թալեբի «Սև կարապ»-ից,
10. Համաշխարհային բանկ. Աղքատության վերաբերյալ զեկույց, 2020թ., էջ 10, https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/34496/211602ovFR.pdf?sequence=24&isAllowed=y,Rqpport 2020 sur la pauvreté et la prospéritée partagé e revers de fortune:
11. ՄԱԿ, https://news.un.org/fr/story/2020/10/1080342
12. ՄակՔինսեյ խորհրդատվական ընկերություն, McKinsey & Company management consulting firm, Industry 4.0 adoption with the right focus, https://www.mckinsey.com
13. «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-սեպտեմբերին» վիճակագրական տեղեկատու, ՀՀ ՎԿ, Երևան, 2022թ., էջ 9, https://armstat.am/am/?nid=82&id=2522
14. «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվար-սեպտեմբերին» վիճակագրական տեղեկատու, ՀՀ ՎԿ, Երևան, 2020թ. https://armstat.am/am/?nid=82&id=2307
15. Աշխատանքի շուկա, «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-մարտին» վիճակագրական տեղեկատու, ՀՀ ՎԿ, Երևան, 2022թ., էջ 109-110, https://armstat.am/file/doc/99530238.pdf
16. Սպառողական գների ինդեքս, «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվար-դեկտեմբերին» վիճակագրական տեղեկատու, ՀՀ ՎԿ, Երևան, 2021թ., էջ 6, https://armstat.am/am/?nid=82&id=2359
17. ՀՀ ՎԿ, ԱՐՄՍՏԱՏ, Հրապարակումներ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2021, https://armstat.am/am/?nid=82&id=2438, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2020,, https://armstat.am/file/article/poverty_2020_a_2..pdf
18. ՀՀ ՎԿ,(ԱՐՄՍՏԱՏ), Հրապարակումներ, Տարեգրքեր, 2020թ.,Հիմնական ժողովրդագրական ցուցանիշներ, էջ 25, https://armstat.am/file/doc/99523643.pdf

19. ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, Ցուցանիշներ, https://www.mineconomy.am/
20. ՀՀ ՎԿ, ԱՐՄՍՏԱՏ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2011-2021, Մաս 3, Հայաստան, ոչ նյութական աղքատությունը, https://armstat.am/file/article/poverty_2021_a_4.pdf, https://armstat.am/file/article/poverty_2020_a__4.pdf, https://armstat.am/file/article/poverty_2019_a_4.pdf
21. ՀՀ ՎԿ, ԱՐՄՍՏԱՏ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2021, Մաս 3, Հայաստան, ոչ նյութական աղքատությունը, https://armstat.am/file/article/poverty_2021_a_4.pdf
22. Համաշխարհային բանկ. Ի՞նչ է աղքատությունը. Բաց տվյալներ,
23. **Մայքլ Կրեմեր, Աբեջիդ Բաներջի, Էսթեր Դուֆլո**, Զարգացման և աղքատության ըմբռնումը, https://www.nobelprize.org/uploads/2019/10/advanced-economicsciencesprize2019.pdf

ДЖ.А. ТАДЕВОСЯН

НОВОЕ ПРОЯВЛЕНИЕ ПРОБЛЕМЫ БЕДНОСТИ В МИРЕ И В АРМЕНИИ

Бедность — явление не новое. Оно углубилось под влиянием эпидемии и проявилось по новой причине. В мировой экономике появился термин ”новые бедные”. Основным путем сокращения бедности является инклюзивное развитие страны.

Ключевые слова: проблема бедности, новые бедные, инклюзивное развитие.

J.A. TADEVOSYAN

A NEW MANIFESTATION OF THE POVERTY PROBLEM IN THE WORLD AND IN ARMENIA

Poverty is not a new phenomenon. It was deepened by the influence of the epidemic and manifested by a new cause. The term "the new poor" appeared in the global economy. The main way to reduce poverty is the inclusive development of the country.

Keywords: poverty problem, the new poor, inclusive development.